Ավետիք Իսահակյան

Գուրգենի անմահ հիշատակին

Գլլգլլալով ջուր է իջնում
Մշու մշուշ սարերեն.
Ծիծեռները ծի՞վ – ծի՞վ եկան
Գարնան գալը երգելեն:

Գարուն չկա հայի համար,
Ծաղիկ, ծիծեռ մեզ պետք չեն.
Գերեզմանս հողին հավասար,
Թո՛ղ փուշ բուսնի իմ վրեն…

Գնա՛, ծիծեռ… թո՛ղ ինձ մենակ՝
Վերքը սրտիս՝ հողի տակ…

Բայց երբ տեսնես թշնամու դեմ
Հայ ժողովուրդ՝ սարի պես
Ջենքը ձեռին հպարտ կանգնած,
Հայե՞ր, լեռնե՞ր իրար պես, -

Ա՞խ, այն օրը արի՛, ծլվա՛,
Գարնան գալը նո՛ր կանչե. –
Հայոց գարնան, որ բյո՞ւ – բարև
Սրտիս խորեն ղողանջե…

1900